

Մարզպետն ընդունեց սիրիահայերին և իրաքցի եզդիներին

Սեպտեմբերի 18-ին մարզպետ Սարգիս Սահակյանը ընդունեց Արագածոտնի մարզում բնակվող սիրիահայերին և իրաքցի եզդիներին:

Ողջունելով ներկաներին, մարզպետն ասաց, որ հանդիպումը իր առաջարկով է եղել, և շնորհակալ եղավ այն ընդունելու համար: Նա նշեց, որ քաղաքական վերջին իրադարձությունների պատճառով փախստականի կարգավիճակի մեջ են հայտնվել Սիրիայի և Իրաքի մեր հայրենակիցներն ու եզդիները: Երկրի նախագահի հանձնարարականով առանձահատուկ ուշադրության են արժանանում նրանք, հանդիպումների, ընդունելությունների ժամանակ բազմաթիվ սոցիալ-տնտեսական հարցեր են լուծվում:

Մարզպետը տեղեկացրեց, որ Արագածոտնում բնակություն են հաստատել սիրիահայ ընտանիքներ, որոնց հետ մշտապես կապ է պահպանում մարզի ղեկավարությունը, լուծման հնարավորություններ ստեղծում բնակարանային, աշխատանքային և այլ խնդիրների համար: Անդրադառնալով եզդիներին, նա ասաց, որ մարզում 20 եզդիական համայնք կա, որտեղ բնակիչները հնարավորություն ունեն ուսանելու իրենց մայրենի լեզուն, պահպանելու և զարգացնելու ազգային մշակույթն ու ավանդույթները:

Հանդիպմանը ներկա էր Եզդիների միության նախագահ Ազիզ Թամոյանը: Նա իր ազգի ներկայացուցիչների անունից շնորհակալություն հայտնեց մարզպետին հրավերի համար և ընդգծեց, որ Արագածոտնը այն մարզերից է, որտեղ եզդիները լիարժեքորեն հնարավորություն ունեն դրսևորվելու, կայանալու, պահպանելու իրենց ազգային արժանիքները:

Սիրիահայերի անունից մարզի ղեկավարությանը շնորհակալություն հայտնեց Աշտարակում բնակություն հաստատած Մարալ Մարտիրոսյանը: Նա նաև մի քանի օրախնդիր հարցադրումներ կատարեց, որոնց լուծման համար մարզպետը տեղում հանձնարարականներ տվեց:

Հանդիպման ավարտին բոլոր ներկաներին մարզպետի կողմից հանձնվեց
դրամական նվիրատվություն: